Հաստատում եմ՝

Տնօրեն՝ / Ա. Բրուտյան /

_31 _օգոստոսի_ 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր
Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոց
IV ա դասարան
Դասվար՝ Լիլի Վահանի Անտոնյան
2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (**դասարանի ընդհանուր բնութագիրը**)- IV ա դասարանը բաղկացած է 25 աշակերտից, որոնցից 14-ը տղաներ են , 11-ը՝ աղջիկներ: Դասարանում դրական և աշխույժ մթնոլորտ է ստեղծված: Ձևավորված է առողջ, համերաշխ կոլեկտիվ, որտեղ կա փոխադարձ սեր, հարգանք և փոխօգնություն: Բոլոր աշակերտները ուշադրության կենտրոնում են, սիրով են հաճախում դպրոց: 4 աշակերտ սովորում են ԱՈՒՊ-ով : Նրանց հետ աշխատում է նաև

բազմամասնագիտական թիմը: Դասարանի նշանաբանն է « Միասին՝ մենք ուժեղ ենք»: Դասարանի ավագը Պապինյան Նարեկն է, Բուժքույրը՝ Գիգոյան Ալյոնան: Ընկերասեր ու բարի երեխաներ են, մշտապես օգնում են միմյանց:

2.ՈՒսումնական-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուս տարվա ընթացքում-

Ուստարվա ընթացքում նախատեսվում է հոգ տանել աշակերտների բազմակողմանի զարգացման մասին՝ հաշվի առնելով կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկու-թյունները: Դաստիարակել գեղեցիկը զգալու, ստեղծագործելու, իրար օգնելու, բարի գործ կատարելու կարողություններ: Սերմանել աշխատասիրություն աշակերտների մեջ, սովորեցնել սեփական օրինակով: Մաքուր պահել դասասենյակը, ջրել և խնամել ծաղիկները, հարգել մաքրուհու աշխատանքը, հետևել հերթապահությանը: Սիրել ու պահպանել հայրենի բնությունը: Սովորել ու հիշել աստվածաշնչյան պատվիրանները: Ապահովել դպրոց- ընտանիք կապը:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** - Հաճախակի զրույցների միջոցով հասնել աշակերտների մեջ հոգևորի կարևորության գիտակցմանը: Համոզել, որ գիտելիքը մնայուն և անկողոպտելի գանձ է,որ կյանքի դժվարությունները հեշտ է հաղթահարում գիտելիքով զինված մարդը: Ծանոթացնել մեր ժողովրդի հոգևոր նվաճումներին: Դիտել «Մանկական Աստվածաշունչ»-ը, պարբերաբար կարդալ փոքրիկ հատվածներ և քննարկել, դրանք կիրառել կյանքում, առօրյայում:Լսել հոգևոր երաժշտություն, այցելել եկեղեցի:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն** - Աշակերտներին ներկայացնել գեղագիտության կանոնները. գեղեցիկ հագնվելու, հարդարվելու, խոսելու, բարեկիրթ պահվածքի կարևորությունը: Ծանոթացնել արվեստի տարբեր ճյուղերին: Կազմակերպել էքսկուրսիա՝ կերպարվեստի թանգարան:Կազմակերպել զրույց- քննարկումներ՝ գեղեցիկի և տգեղի, չարի և բարու մասին:Կարողանալ բնութագրել գեղարվեստական ստեղծագործության մեջ գործող անձանց:

3.3 **Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն** - Զրույցների միջոցով երեխաներին ծանոթացնել մեր հայրենիքի և ժողովրդի պատմությանը: Դիտել զոհված ազատամարտիկների նկարներ, ճանաչել նրանց, իմանալ նրանց կատարած սխրանքների մասին:ՈՒսուցանել ՀՀ դրոշի, զինանշանի և օրհներգի պատմությունը, երգել օրհներգը և հայրենասիրական երգեր:Այ-ցելելդպրոցի ռազմագիտության դասարան, իմանալ ապաստարանի տեղը:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն -** ՈՒժեղ մարդկանց և անվանի մարզիկների օրինակով աշակերտների մեջ առաջացնել առողջ և գեղեցիկ մարմին ունենալու ձգտում: Հետաքրքրություն առաջացնել որևէ սպորտաձևով պարապելու: Ընդգծել մաքուր օդում լինելու, ռեժիմով սնվելու կարևորությունը: Կազմակերպել զրույց՝ «Առողջ սնունդ» թեմայով: Հետևել ֆիզկուլուրայի ուսուցչի բոլոր հրահանգներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն - Տարրական դասարանում մեծ ուշադրություն դարձնել տարբեր մասնագիտությունների առանձնահատկությունների ծանոթացմանը: Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցի բակի մաքրմանը: Ամեն մի գործ պիտի կատարվի պատվով ու նվիրումով: Չկա վատ աշխատանք:Զրուցել աշխատասիրության և ծուլության մասին: Կարդալ առակներ, առած- ասացվածքներ:Սերմանել հոգատարություն կենդանիների նկատմամբ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն - Երեխաներին բացատրել, որ միջավայրի վիճակից են կախված մարդու առողջությունն ու տրամադրությունը:_Չպետք է վնասել բնությունը,այն չպետք է աղտոտել: Հաճախակի պետք է շրջել դպրոցամերձ այգում, լինել բնության գրկում: Ծնողների հետ մասնակցել շաբաթօրյակների:Նկարել բնանկար, խրախուսել լավագույն աշխատանքները:

4.Դպրոց-ընտանիք կապը - Միասնական խնդիրների մշակում ողջ ուսումնական տարվա ընթացքում: Կազմակերպել ծնողական ժողովներ, տեղյակ պահել դպրոցի հիմնախնդիրներին: Ծողներին մասնակից դարձնել դպրոցական միջոցառումներին: Ճիշտ կազմակերպել ծնողխորհրդի աշխատանքը: Պարբերաբար տեղեկացնել ծնողներին աշակերտների ուսման առաջադիմության և վարքի մասին:Միասին ստեղծել դիդակտիկ պարագաներ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետ	Կատարողներ
1-ին շաբաթ	1.Զրույց նոր ուսումնական տարվա անելիքների մասին: 2.Դասարանի ավագի ընտրություն: 3.Հրավիրել ծնողական ժողով, ընտրել ծնողական խորհուրդ, խնողխորհրդի նախագահ: 4.Դասագրքերի բաշխում,տետրերի հավաքում:	սեպտեմբեր	դասվար ծնողներ
2-րդ շաբաթ	1.Ծանոթացում դասացուցակին և վարքի կանոններին: 2. Էքսկորսիա դեպի Օշական:		դասվար ծնողներ
3-րդ շաբաթ	Կազմակերպել հին դասագրքերի վերանորոգման աշխատանքներ: Զրույց՝<<Գիտելիքը լույս է>> թեմայով:		դասվար գրադարանավար
4-րդ շաբաթ	1.Զրույց՝<<Անկախության օրը>>		դասվար

	թեմայով:Արտահայտել մտքեր,ի՞նչ տվեց մեզ անկախությունը: 2.Կավճանկարչություն դպրոցի բակում:		
5-րդ շաբաթ	1.Զրույց՝<<Իմ ուսուցիչը>> թեմայով: 2.Գրել նամակ ուսուցչին:	հոկտեմբեր	դասվար
6 –րդ շաբաթ	Զրույց՝<<Ի՞նչն է լավ,ի՞նչն է վատ>> թեմայով: <<Ճանաչում եմ ինքս ինձ>>, <<Իմ վարքը>> թեմաներով:		դասվար
7-րդ շաբաթ	Կազմակերպել փոքրիկ ցերեկույթ <<Մրգահանդես>>		դասվար ծնողներ
8-րդ շաբաթ	1.Ի՞նչ է անձնական հիգիենան,պետք է միշտ լինել մաքուր և կոկիկ: 2.Դիտել մեր քաղաքի՝ Վանաձորի նկարներ: Երգել «Վանաձոր»երգը:		դասվար բուժքույր
9-րդ շաբաթ	Կազմակերպել ցերեկույթ <<Աշնան նկար>> վերնագրով:	նոյեմբեր	դասվար ծնողներ
10-րդ շաբաթ	Զրույց՝ <<Ի՞նչ գիտեմ հայրենիքիս մասին>> թեմայով: Զրույց պանդխտության երևույթի շուրջը՝ <<Հայաստանն իմ հայրենիքն է>>:		դասվար
11-րդ շաբաթ	Զրույց՝ <<Իմ ծննդավայրը >> , <<Իմ տունը >> թեմայով:		դասվար

12- րդ շաբաթ	Զրույց՝<<Իմ շրջապատի մարդիկ >> թեմայով:		դասվար
13-րդ շաբաթ	Աղջիկների և տղաների հարաբերությունների քննարկում:	դեկտեմ բեր	դասվար
14- րդ շաբաթ	1.Ընթացիկ առաջադիմության վերլուծություն, խրախուսանք: 2.Ընթերցել Թումանյանի հեքիաթներից, ներկայացնել դերերով:		դասվար
15-րդ շաբաթ	1.Նախապատրաստվել ամանորյա հանդեսի: 2.Պատրաստել ամանորյա բացիկ: 3.Զարդարել տոնածառը:		դասվար ծնողներ
16-րդ շաբաթ	Ամանորյա հանդես:		
17-րդ շաբաթ	Զրույց՝<<Ինչ եմ ուզում դառնալ, իմ սիրած արհեստը , մասնագիտությունը>>:	հունվար	դասվար
18-րդ շաբաթ	Քննարկել «Չարի վերջը» հեքիաթը և բեմադրել:		դասվար
19-րդ շաբաթ	Զրույց անձնական հիգիենայի մասին:		դասվար բուժքույր
20-րդ շաբաթ	1.Զրույց ֆիզկուլտուրայի և սպորտի մասին; 2.Ցուցադրել անվանի մարզիկների նկարները:	փետրվար	դասվար ֆիզկուլտուրայի

	3.Զրույց՝ <<Իմ սիրած սպորտաձևը >>:		ուսուցիչ
21-րդ շաբաթ	1.Զրույց՝«Ո՞ր դերասանին,ո՞ր նկարչին եմ ճանաչում»: 2. Դիտել տեսաֆիլմ և քննարկել:		դասվար
22-րդ շաբաթ	1.Զրույց ընտանեկան փոխհարաբերությունների մասին: 2. Ընտանեկան հարաբերությունների վերլուծություն:		դասվար ծնողներ
23-րդ շաբաթ	Սիրած հեռուստահաղորդման բնութագրում և քննադատում: Հեռուստացույցի վնասն ու օգուտը:		դասվար
24-րդ շաբաթ	Զրույց՝ <<Մարտի 8 >> տոնի առաջացման մասին:	մարտ	դասվար
25-րդ շաբաթ	1.Սեփական արարքների գնահատում: 2. Դիտել տեսաֆիլմ՝ «Ինչպե՞ս անցնել փողոցը»:		դասվար
26-րդ շաբաթ	Գիրքը մեր կյանքում: Համակարգիչը և մարդը:		դասվար
27-րդ շաբաթ	Առողջությունը և երջանկությունը:	ապրիլ	դասվար
28-րդ շաբաթ	1.Զրույց կրոնական հավատալիքների մասին: 2.Պահպանու՞մ ենք արդյոք կրոնական հավատալիքները:		դասվար
29-րդ շաբաթ	Գեղարվեստական գիրքը մեր կյանքում:		դասվար
30-րդ շաբաթ	1.Մեր ընտանեկան պարտականությունները: 2.Օգնո՞ւմ ենք արդյոք ծնողներին:		դասվար
31-րդ շաբաթ	Զրույց՝<<Մեր ժողովրդի անցյալը >> թեմայով Մայիս ամիսը, որպես հայ ժողովրդի հաղթանակների ամիս:	մայիս	դասվար
32-րդ շաբաթ	Նախապատրաստվել տարեվերջյան միջոցառմանը:		դասվար ծնողներ
33-րդ շաբաթ	Զրույց՝<<Ավարտում եմ կրտսեր դպրոցը >> , <<Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին>> թեմայով:		դասվար
34-րդ շաբաթ	Տարեվերջյան էքսկուրսիա		դասվար ծնողներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը:	ծանոթություն

01.09	Համադպրոցական միջոցառում նվիրված գիտելիքի օրվան:	
	Կազմակերպել փոքրիկ բեմադրության դիտում <<Թագավորն ու հողագործը >>:Նպատակը՝ աշխատասիրության, բարու դաստիարակության և աշխատասիրության փառաբանում:	
	Զրույց՝ <<Ի՞նչ եմ հասկանում անկախություն ասելով>> թեմայով:	
	Համադպրոցական միջոցառում <<Իմ ուսուցիչը >>	
	Կազմակերպել էքսկուրսիա բնության գրկում :	
	Համադպրոցական միջոցառում <<Ոսկեհեր աշուն >>:	
	Ամանորյա հանդեսի նախապատրաստում:	
	Զրույց՝ <<Մեր հզոր բանակը >>:	
	Զմեռային խաղերի կազմակերպում դպրոցամերձ հրապարակում:	
	Ցերեկույթ՝<<Մայր իմ անուշ ու անգին >>	
	Զրույց՝<<Իմ հայրենիքի հերոսական անցյալը >>:	
	Տարեվերջյան միջոցառում	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
	ՈՒս. տարվա աշխատանքներ: Աշակերտների հիգիենայի քննարկում:	1.Ծնողները տեղեկացվեն նոր ուս.. տարվա անելիքներին: 2.Պահպանեն հիգիենան: 3.Խնամքով օգտագործեն դասագրքերը	
	Փոխտնօրենի զեկույցը ուս. տարվա ընթացքում կատարվող միջոցառումների մասին	Աշակերտների արտաքին տեսքի, մաքրության մասին հարցերի քննարկում	
	Առաջին կիսամյակի ավարտ:	ՈՒս. տարվա առաջադիմության արդյունքների քննարկում:	

	Երկրորդ կիսամյակի սկիզբ:	Երկրորդ կիսամյակի անելիքները , որոնք ուղղված պետք է լինեն առաջադիմության բարձացմանը:	
	ՈՒսուցման ընթացքում տեղ գտած թերացումները և համատեղ ուժերով կատարվե լիք արդյունավետ աշխա- տանքները: ԱՈՒՊ-ով կատարվող աշխատանքների մասին տեղեկությունների հաղորդում:	Ծնողների ներգրավումը ուսուցման պրոցեսում:	
	Ինչպես պատրաստվել քննությանը:	Քննական առաջադրանքների բարդության աստիճանը: Աշխատանք թեստերով:	
	2022-2023 ուս. տարվա ավարտը, առաջադիմության աստիճանը և հետագա անելիքները:	Անցում միջին դպրոց:	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	զրույցի համառոտ բովանդակություն	ծանոթություն
	Աշակերտների առաջադի մության և վարքի կանոն ների մասին:	Յուրաքանչյուր ծնող պարտավոր է հետևողական լինել իր երեխայի առա- ջադիմության և հիգիենայի հարցում:	
	Աշակերտների առաջադի մության հարցը:	Աշակերտների առաջադիմության հարցի քննարկում,այլ մոտեցումներ աշակերտների հետ առաջադիմու- թյան բարձրացման համար:	
	Զրույց՝<<Աղանդավորական շարժում >>	ՈՒշադրություն դարձնել երեխանե- րի քրիստոնեական դաստիարակու- թյանը:	

	Ձևավորել առողջ մթնոլորտ միջին դասարան փոխադրվելու համար:	Երեխաների մեջ ամրապնդել սեր և հարգանք միմյանց նկատմամբ:	

ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ Անդրեասյան Տաթև
Անդամներ՝ Ղազարյան Ծովինար
Անդամներ՝ Չոբանյան Աստղիկ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օրը	քննարկվող հարցեր	Ծնողխորհրդի նիստի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
	Աշխատանք տանել աշակերտների հիգիենայի և վարքի կանոնների ուղղությամբ:	Ինչպես կազմակերպել աշխատանք մաքուր և կոկիկ արտաքին ունենալու ուղղությամբ:	
	<<Բարին արա >> այց մանկապարտեզի սաներին նվերներով:	Երեխաներին ընդգրկել նվերների ձևավորման գործընթացում:Դաստիարակել սեր և բարություն դիմացինի նկատմամբ:	

ԴԱՍՎԱՐԻ ԺԱՄ

Ամիս ամսաթիվ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող

	1.Զրույց՝ «Գիտելիքի օր»	
	2.Մեր հիգիենան	
	3.Հրավիրել ծնողական ժողով	
	4.Իմ անկախ Հայաստան:	
	5.Էքսկուրսիա դեպի Օշական	
	6.Զրույց՝« Իմ ուսուցիչ»	
	7.Զրույց՝ « Ինչն է լավ ,ինչն է վատ»	
	8.Աստվածաշնչյան ընթերցումներ	
	9.Զրույց՝ « Ինչ գիտեմ հայրենիքիս մասին»	
	10.Զրույց՝ «Իմ ծննդավայրը »	
	11.Փոքրիկ էքսկուրսիա մեր քաղաքի տեսարժան վայրերում	
	12.Զրույց՝ «Իմ շրջապատի մարդիկ»	
	13.« Աշունը մեր քաղաքում» էքսկուրսիա բնության գրկում	
	14.Աղջիկների և տղաների հարաբերությունների քննարկում	
	15. «Բարին արա» այցելություն մանկապարտեզ	
	16.Այց կերպարվեստի թանգարան	
	17.Ընթացիկ առաջադիմության վերլուծություն	
	18. Հրավիրել ծնողական ժողով	
	19.Թղթի մակուլատուրայի հավաքում	
	20.Ամանորյա միջոցառման կազմակերպում	
	21.«Ուրախ Ամանոր» սրճարանում	
	22. Զրույց՝ «Ինչ եմ ուզում դառնալ »	
	23.Զրույց՝ «Մեր հզոր բանակ»	
	24.Գրել նամակ զինվորին	
	25.Դիտել մուլտֆիլմ՝ «Գտնված երազ»	
	26.Հրավիրել ծնողական ժողով:	
	27.Զրույց՝ « Իմ ընկեր լուսակիրը»	
	28.Ընթերցել Աթ. Խնկոյանի առակներից և քննարկել:	
	29.Զարգացնել ընթերցանության արագությունը, խրախուսել լավ կարդացող աշակերտներին:	
	30.Ունկնդրել Ա.Խաչատրյանի ստեղծագործություններից:	
	31. Պատրաստել գարնանային բացիկներ:	
	32.Այցելել «Կամակատար»	
	33.Ավարտական միջոցառում:	

	34.Տարեվերջյան էքսկուրսիա	